

A 08.00.02
ԼԸ - 79

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱՐԱՄՊՈՂՈՍԻ ՄՏԻԹԱՐՅԱՆ

ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
(Հայաստանի Հանրապետության Ելիրակի մարզի օրինակով)

Ը.00.02. «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտությունը և կառավարումը» մասնագի-
տությամբ տնտեսագիտության քեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենա-
խոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2001

Ատենախոսության թեման հաստատվել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ Գ.Գ.Հայրունյան
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԳԱ թղթակից անդամ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Ա.Զ.Սարգսյան,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Բ.Ա.Կիրակոսյան
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության
Տնտեսագիտական հետազոտությունների
ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2001 թ. ապրիլի 19-ին, ժամ «15⁰⁰»-ին
Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտում գործող թիվ 014 մասնագիտական
խորհրդում: Հասցեն՝ 375025, ք.Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Եր. ՊՏԻ-ի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2001 թ. մարտի «19»-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ

Գ.Մ.Տերտերյան

1002-2891

Հեղազոտության արդիականությունը և հրատարակությունը: Ագրոպարենային համալիրի ճյուղերի կայուն զարգացումը շուկայական հարաբերությունների պայմաններում ներդրումային ակտիվության, գյուղատնտեսական ձեռնարկությունների անհրաժեշտ դրամական և նյութական ռեսուրսներով հատկացման կարիք ունի:

Տնտեսական ճգնաժամը, որն ընդգրկել է հանրապետության ագրոպարենային համալիրի բոլոր ճյուղերը, առավել լուրջ է արտահայտվում ներդրումային քաղաքականությանը:

Շիրակի մարզի ագրոպարենային համալիրի վերափոխումները համընկած հանրապետության էկոնոմիկայում տեղի ունեցող բացասական երևույթների հետ, որն էլ պայմանավորեց մարզի ինչպես արտադրական, այնպես էլ ոչ արտադրական ոլորտների ներդրումային ակտիվության կտրուկ անկումը: Եթե ագրոպարենային համալիրի բաժինը հանրապետության տնտեսության ընդհանուր կապիտալ ներդրումների մեջ 1991թ. կազմել է 31%, ապա 1999թ. այն ընդամենը 10% էր: Այդ տարիների ընթացքում մարզի կապիտալ ներդրումների ծավալը կրճատվել է 116 անգամ: Գյուղատնտեսական ձեռնարկություններից շատերում ներդրումային գործունեություն պարզապես չկա, քանի որ նրանք գրկված են ոչ միայն ընդլայնված, այլ նաև պարզ վերարտադրություն իրականացնելու հնարավորությունից:

Ներդրումային գործունեությունը կրճատվել է նաև տնտեսություններում անհրաժեշտ շրջանառու միջոցների և երկարաժամկետ վարկերի տրամադրման բացակայության պատճառով: Մարզի սննդարդյունաբերության ենթահամալիրում ձևավորված իրավիճակը բնորոշագրվում է սննդամթերքների արտադրանքի արտադրության կտրուկ անկման, ձեռնարկությունների մեծ մասի ճգնաժամային իրավիճակով, նրանց հիմնական արտադրական ֆոնդերի, հատկապես դրանց ակտիվ մասի ֆիզիկական մաշվածության մեծ աստիճանով:

Վերարտադրության պրոցեսի հիմնական համաձայնությունների լալստման հետևանքով նրանց մաշվածքը կազմել է 40%:

Առանց ներդրումային գործունեության ակտիվացման գյուղատնտեսությունում անհնար է հաղթահարել արտադրության անկումը, ապահովել ֆինանսական կայունացում:

Ելնելով վերոհիշյալից՝ խիստ արդիական և ժամանակին է ՀՀ Շիրակի մարզի ագրոպարենային համալիրի ներդրումային իրավիճակի, նրա հետագա զարգացման խնդիրների ուսումնասիրումը, որին էլ նվիրված է սույն առևճակոտությունը:

Հարկ է նշել, որ Շիրակի մարզում, ինչպես նաև հանրապետության այլ մարզերում նույնպես կապիտալ ներդրումների ծավալները ի հաշիվ ֆինանսավորման բոլոր աղբյուրների, ներառյալ մասնավոր և արտասահմանյան ներդրումները, աճում են խիստ դանդաղ:

Ուսումնասիրման հիմնական նպատակները:

- Ագրոպարենային համալիրի արդյունավետ ներդրումային ծրագրերի բացահայտման ընտրության հիմնադրույթի մշակումը,
- Ագրոպարենային համալիրում ներդրումների ընդգրկումը և ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումը Շիրակի մարզում,
- Ագրոպարենային համալիրի ներդրումային ծրագրերի մակրոտնտեսական և ճյուղային հիմնավորումը:

Ուսումնասիրման հիմնական խնդիրները:

- Շիրակի մարզի գյուղատնտեսության հիմնական ֆոնդերի վերարտադրության ստրատեգիայի մշակումը,
- Շիրակի մարզի ագրոպարենային համալիրի ներդրումների գերակայությունների ուղղությունների որոշումը,
- Շիրակի մարզի գյուղատնտեսության մոդերնացման գործում արտասահմանյան ներդրումների դերի բացահայտումը և հիմնավորումը,
- Մարզի ագրոպարենային համալիրի խստոր կապիտալի ներդրման հիմնադրույթային մոդելի մշակումը:

Հեղափոխության օբյեկտը և առարկան:

Հետազոտության օբյեկտն ընտրված է հանրապետության Շիրակի մարզի ագրոպարենային համակարգը՝ գյուղացիական տնտեսությունները և վերաձևավոր արդյունաբերությունը, իսկ որպես հետազոտության առարկա է ընտրվել ներդրումային քաղաքա-

կանության, նրա խնդիրների լուծմանը նպաստող ՀՀ իրավա-օրենսդրական դաշտը, օրենքները, օրենսդրական ակտերը:

Արևմտախոսության տեսական, տեղեկագրական և մեթոդական հիմքերը:

Հետազոտության հիմք են հանդիս եկել շուկայական տնտեսության անցմանը նվիրված աշխատանքները, ներդրումային քաղաքականության մշակման արտասահմանյան փորձը, ներդրումային ռազմավարության մշակմանը վերաբերվող մոտեցումները, ինչպես նաև ներդրումային ռազմավարության մշակմանը նպաստող և կարգավորող օրենքները, ՀՀ Նախագահի և Կառավարության հրամանագրերն ու որոշումները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ Կառավարության ծրագրային նյութերն ու տվյալները, ՀՀ վիճակագրության, ֆինանսների և էկոնոմիկայի, գյուղատնտեսության նախարարությունների, ՀՀ գիտահետազոտական համալսարանային ինստիտուտների ուսումնասիրությունների որոշ նյութեր: Հետազոտության ընդացքում կիրառվել են վիճակագրական լսման արդյունքներ, համեմատական վերլուծություններ:

Հեղափոխության հիմնական արդյունքների գիտական նորույթը:

Սույն աշխատությունում կատարված հետազոտությունները և մշակված առաջարկությունները Շիրակի մարզի վերաբերյալ առաջինն են:

Հետազոտության արդյունքների հիմնական գիտական նորույթը բացի այդ կայանում է՝

Բացահայտվել և հիմնավորվել է

- ագրոպարենային համալիրում ներդրումների ընդգրկման, ներգրավման պայմանները որպես երկարաժամկետ ֆինանսավորման հիմնական գործոն,
- արտասահմանյան ներդրումների դերը Շիրակի մարզի ագրոպարենային համալիրի տնտեսական պատասխանատվության մեխանիզմի կատարելագործման գործում,
- մշակվել է Շիրակի մարզի ներդրումների խստոր ուղիների հիմնադրույթային մոդելը,
- բացահայտված են Շիրակի մարզի ագրոպարենային համալիրի ներդրումների իրականացման գերակայությունները,
- հիմնավորված է մարզի ագրոպարենային համալիրի մակրոտնտեսական և ճյուղային ներդրումային ծրագրերի իրականացումը,

- մշակված 1. Շիրակի մարզի գյուղատնտեսության հիմնական ֆոնդերի վերարտադրության ստրատեգիան՝ պայմանավորված ներդրումային քաղաքականությամբ:

Հեռագոտության արդյունքների գործնական նշանակությունը:

Հեռագոտության հիմնական արդյունքները ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Նրանք կարող են օգտագործվել արդյունավետ ներդրումային ծրագրերի ընտրության, ներդրումային քաղաքականության իրականացման գերակայությունների որոշման, ագրոպարենային համալիրի ներդրումների տարբեր մոդելների ընտրության ժամանակ:

Միաժամանակ առենախոսության հետագոտության արդյունքները կարող են կիրառվել մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կազմման ժամանակ:

Արենախոսության հրապարակումները:

Հեռագոտության հիմնական արդյունքները արտացոլվում են հեղինակի լույս ընծայած երկու գրքույկներում (3,5 և 4 մասով) և երեք հոդվածներում:

Արենախոսության ծավալը և կառուցվածքը:

Առենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացությունների և առաջարկությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 156 էջի վրա, ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱՍՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԿԱԿՈՅՈՒՆԸ

Առաջաբանում նշվում է, որ ընդհանուր առմամբ թե՛ հանրապետությունում և թե՛ Շիրակի մարզում ներդրումների իրականացման համար անբարենպաստ իրավիճակ է ափսոսում: Ներդրումների կուտակման ծավալները փոքր են, քացարձակապես անհամադրելի են սպասվելիքին: Ներդրումային միջավայրի վրա ազդող առավել կարևոր գործոններն են քաղաքական և տնտեսական անկայունությունը, օրենսդրական և կազմակերպչական ֆրակտուրացվածքային ապահովության գաժը ծակաբույսերը, ինչպես նաև այդ գործոններով պայմանավորված ռիսկայնության մեծ ստախճանը:

Ագրոպարենային համակարգում ստեղծված չլ. խթանների և արտոնությունների այնպիսի համակարգ, որն ապահովեր ներդրումների գրավորությունը ինչպես բուն գյուղատնտեսությունում, այնպես էլ ագրոպարենային համալիրի այլ ճյուղերում:

Առենախոսության առաջին գլխում՝ «Շիրակի մարզի ագրոպարենային համալիրի վիճակի վերլուծությունը», արվում է մարզի գյուղատնտեսության արտադրության և սննդ-արդյունաբերության ճյուղի վերջին տարիների վիճակի մանրամասն վերլուծությունը:

Շիրակի մարզը մինչև ֆորմյան ժամանակահատվածում հանրապետության ագրոպարենային ոլորտում առաջատար տեղ էր գրավում: Ներկայումս Շիրակի մարզում է կենտրոնացված ցանքատարածությունների 17,8%-ը: Բուսաբուծության ճյուղը մասնագիտացված է հացահատիկային, կարտոֆիլի ու կերային մշակաբույսերի մշակությամբ: Շիրակի մարզին բաժին է ընկնում հանրապետության հացահատիկային ցանքատարածությունների 1/5-րդ մասը, կարտոֆիլի ցանքերի 8 և բանջարեղենի՝ 6,1%-ը: Ընդ որում 1996-1999թ. միջին ցուցանիշով Շիրակի մարզը ապահովել է հանրապետության հացահատիկի համախառն բերքի 21,3, կարտոֆիլի՝ 9,4 և բանջարեղենի՝ 6,5%-ը: Այդ տարիների միջին բերքատվությունը մարզում կազմել է միջին հանրապետական բերքատվության 101,9, կարտոֆիլինը՝ 118,3, բանջարեղենինը՝ 107%-ը: Նույն 1996-1999թթ. Շիրակի մարզի հացահատիկի զեռումները հանրապետության տեսակարար կշռում կազմել են 11,8%:

Շիրակի մարզի հողագործության կառուցվածքը և վարման համակարգը հիմնականում ենթարկվում են անասնապահության ճյուղի պահանջներին: Հողագործությունը այստեղ ունի կերային ուղղվածություն: Կերային մշակաբույսերի տակ տարեկան հատկացվում է ցանքատարածությունների 65-68%: Հարկ է նշել, որ հանրապետության կերային մշակաբույսերի ցանքատարածությունների գրեթե 1/5-րդ մասը կենտրոնացված է Շիրակի մարզում: Սակայն կերային մշակաբույսերի բերքատվությունը մարզում ցածր է նրա պոտենցիալ հնարավորություններից:

Շիրակի մարզը միշտ ունեցել է բարձր զարգացած անասնապահություն: Եվ այսօր էլ նա հաստատում է հանրապետության անասնապահության ոլորտում իր առաջատար դիրքը: Այսպես, 1996-1999թթ. ընթացքում մարզում կային 64,1 հազար գլուխ խոշոր և զիջերավոր անասուն, որից 34,7 հազ. գլուխը՝ կովեր, որը կազմել է հանրապետության խոշոր

եղջերավոր անասունների ընդհանուր գլխաքանակի համապատասխանաբար 13,3 և 13,2%-ը:

Մսի և կաթի արտադրությամբ Շիրակի մարզը գտնվում է երկրորդ տեղում, համապատասխանաբար 10,1 և 59,7 հազար տոննա, կամ ամբողջի 12,0 և 13,3%՝ իրենից առաջ քոլոնելով միայն Գեղարքունիքի մարզին:

Սակայն անասնապահությունում նպատակային տոննային աշխատանքների բացակայությունը և առաջին հերթին անասնակերի պակասը հանգեցնում է մարզում ճյուղի էքստենսիվ զարգացմանը, որն էլ անասնապահության ոլորտը ևս է մղել 80-ական թվականների մակարդակին:

Սննդի և վերամշակող արդյունաբերությունը Շիրակի մարզում նույնպես գտնվում է շատ ծանր տնտեսական վիճակում: Այսպես, հացի և հացամթերքի արտադրությունը 1999թ-ին կազմել է միայն 14,4%՝ 1990թ-ի մակարդակի հետ համեմատած, հորտալեղենինը՝ 0,8%, մսի պահածոներինը՝ 33,5%: Գրեթե լիովին դադարեցված է մսի վերամշակման արդյունաբերությունը այն դեպքում, երբ Գյումրիի մսի կոմբինատը մեծ համբավ ուներ հանրապետությունում, տարեցտարի կրճատվում է կարնեղենի և պանրի արտադրությունը: Միայն գարեչրի և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրությունն է մարզում գտնվում 1990թ. մակարդակին:

Հետաքրքիր է, որ սննդի և վերամշակող ձեռնարկությունների հզորությունների թերթեռնվածության ֆոնի վրա մարզում ընթանում է մանր, երբեմն էլ պարզունակ ցեխերի շինարարություն և որոնց սարքավորումների հագեցվածության ցածր մակարդակի պայմաններում անհնար է ապահովել անրավում, որակյալ արտադրանքի արտադրություն՝ պատրաստի արտադրանքի ցածր ինքնարժեքով: Սակայն հենց այստեղ է կատարվում մարզի գյուղատնտեսական արևելքների հիմնական մասի վերամշակումը՝ դրանով իսկ կարող կրճատելով սննդարդյունաբերության և վերամշակող ձեռնարկությունների հոսքային գոտիները:

Մարզում կապիտալ ներդրումները նույնպես ունեն կրճատման սիտուացիա: Այն հատկապես նկատվել է սննդարդյունաբերությանը, հատկապես կապիտալ ներդրումներում,

որտեղ դրանց ծավալը 1999թ. կազմել է 2142 մլն.դրամ, կամ 52,3 ու 37,9%՝ համապատասխանաբար 1997 և 1998թթ. մակարդակների համեմատ:

Մարզում տեղի են ունեցել ԱԱՀ-ի կապիտալ ներդրումների կառուցվածքի սկրբորոնքային փոփոխություններ: Առաջին հերթին դա վերաբերվում է ագրարայինաբերական ոլորտի ներդրումների աղբյուրների հարաբերակցությանը: Այսպես, 1991-1999թթ. ընթացքում ավելի քան 9 անգամ կրճատվել է պետբյուջեի բաժինը: ԱԱՀ-ի կապիտալ ներդրումների կառուցվածքում կայուն ձևով ավելացվել է ձեռնարկությունների սեփական միջոցների բաժինը, որն արդեն գերազանցել է 80% սահմանը, իսկ բյուջետային ներդրումների կրճատում նկատվել է ոչ միայն ԱԱՀ-ում ընդհանրապես, այլ նաև՝ նրա առանձին ճյուղերում:

Արտնախտության երկրորդ «Ազգային առաջնությունների ներդրումները» որպես երկարաժամկետ ֆինանսավորման հիմնական գործոն և ներդրումային բաղադրականության հիմնական ուղղությունները» գլխում դիտարկված են ներդրումների արդյունավետության բարձրացման ուղիները գյուղատնտեսությունում, ներդրումների գործոնները և հիմնական ուղղությունները, ագրարայինաբերական համալիրի արդյունավետ ներդրումային ծրագրերի ընտրությունը և բացահայտումը, ռեզիոնալ ԱԱՀ-ի ներդրումային ծրագրերի բյուջետային արդյունավետության խնդիրները, ներդրումների աղբյուրները շուկայի պայմաններում, գյուղատնտեսության ոլորտում ներդրումների վերադարձելիության ու հիմնական ֆոնդերի վերարտադրությունը խնդիրները:

Գյուղատնտեսությունում ներդրումային ակտիվության իջեցման պրոցեսի վրա շուկայական տնտեսության պայմաններում ներգործում են հետևյալ գործոնները՝

- ընդհանուր անկայուն տնտեսական և քաղաքական իրավիճակը, երկարաժամկետ ներդրումներ կատարելու նկատմամբ անվստահությունը,
- ներդրումային կուտակումների արժեզրկումը, այլ թվում՝ ձեռնարկությունների ամորտիզացիոն կուտակումների արժեզրկումը,
- շուկայական տնտեսության պայմաններում ծանր տնտեսական վիճակում հայտնված գյուղատնտեսական ձեռնարկությունների կողմից կարճաժամկետ փոխառությունների մեծ պահանջարկը,

- ԱԱՀ-ում արտադրության իրականացման նպատակով ներդրումներ կատարելու մեխանիզմների և խթանների բացակայությունը:

Հայրի Լ. նշել, որ գյուղատնտեսության կառուցվածքային վերակառուցումը ներկայացնում է սկզբունքային նոր պահանջներ ներդրումային քաղաքականության ոլորտում, երբ գործում են գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները:

Կապիտալ ներդրումների փոխհատուցելիությունը գյուղատնտեսությունում շատ ցածր է, հետևաբար որոշում ընդունելու համար, կոնկրետ ներդրումներ կատարելու նպատակով, անհրաժեշտ է իրականացնել նրա արդյունավետության որոշման տնտեսական լուրջ հաշվարկներ: Երկրի ագրարային սեկտորի առջև ծառայած խնդիրների լուծումը ընդհանուր առմամբ և մասնավորապես՝ ռեզիոնով առումով, պահանջում է Լապես վերանայել կառուցվածքային և ներդրումային համակարգի քաղաքականությունը: Ալենիայտ Լ., որ դրանք միջճյուղային կապերն են, միջռեզիոնալ նյութական հոսքերը և տնտեսական հարաբերությունները:

Բյուջետային հատկացումների ղեկիցիտար գյուղատնտեսության ընդհանուր ներդրումների ծավալում մեր հանրակատարությունում հանգեցրել է գյուղատնտեսական ապրանքարտադրողների մասսայական սնանկացմանը:

Խիստ կարևոր է համակարգված ձևով հիմնվել պրակտիկայում ձևավորված մոտենցումների և սկզբունքների վրա: Դրանցից հիմնականներն են՝

- արտադրանքի, ռեսուրսների և պրամական միջոցների հոսքերի մոդելավորումը,
- շուկայի, ձեռնարկությունների ֆինանսական վիճակի արդյունքների հաշվի առնելը, որոնք հավակնում են ծրագրի իրականացմանը, վտանդության աստիճանը նրա ղեկավարների նկատմամբ, շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանը,
- Լ.Ֆեկտի որոշումը համադրելով սպասվելիք ինտեգրալ արդյունքները և ծախսերը՝ նշանակետ ունենալով սյահանցվող կապիտալի եկամտի նորմայի ձևը բերումը,
- սպասվելիք ծախսերի և եկամտների համաչափելիության ապահովումը,
- արժեզրկման ազդեցության, վճարումների ուղացումների և այլ գործոնների հաշվի առնելը,

- անորոշության և ռիսկի աստիճանի հաշվի առնելը՝ կապված ներդրումների ներգրավման հետ:

Արտադրության ծավալների անկման պայմաններում ներդրումների խնդիրը հնարավոր չի լինում լուծել բեկուզ և ձեռնարկությունների տեխնոլոգիական հետամնացության պատճառով: Արտադրության անկումը հանգեցրել է ռեսուրսային և ապրանքա-դրամական անհավասարակշռվածությանը ուղչ Էկոնոմիկայում: Պետական կարգավորման բացակայության պայմաններում ձեռնարկությունների զգալի մասը սկսել է սպառել կուտակված միջոցները, ավելացրել է ցածր լիկվիդայնության ակտիվները, անավարտ արտադրությունը, բույլ է տվել չիրացված պատրաստի արտադրանքի, հուծքի, նյութերի, դեբիտորական պարտքերի կուտակում, որը հանգեցրել է ծախսերի աճին:

Արդյունավետ ներդրումային քաղաքականության իրականացումը երկարաժամկետ հեռանկարում նախատեսում է տնտեսավարման սուբյեկտների միջոցների մասնաբաժնի աճ ընդհանուր կապիտալ ներդրումների մեջ: Անհրաժեշտ է վերականգնել ամորտիզացիոն հատկացումների դերը, որոնք ներկայումս աչքի չեն ընկնում ձեռնարկությունների ընդհանուր ֆինանսական միջոցների մեջ, գտնվում են միացյալ հաշվարկային հաշվում և օգտագործվում են ձեռավորված իրադրություններում՝ ընթացիկ կապիտալի համար:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատիվ կառուցվածքային ներդրումային քաղաքականությունը հանգեցրել է կապիտալ ներդրումների ծավալների կրճատմանը, արտադրանքի պոտենցիալ պահանջարկ ունեցող ձեռնարկությունների արտադրության անկմանը և հզորությունների քերթնվածությանը:

Մեր կարծիքով մոտավա 4-5 տարվա կարվածքով ներդրումների առաջնային ուղղությունները կարող են լինել.

- արտադրությանը աջակցումը հիմնականում՝ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին՝ նրանց տնտեսաֆինանսական ճգնաժամից դուրս բերելու համար,
- հիմնական ֆունդերի քարմացումը,
- նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի արագացված ներդրումը՝ քարծրացնելով արդյունավետության միջին մակարդակը,

- տելեմիլիկական և տելեմոբիլիտիկական մակարդակների միջև խզման վերացումը գույություն ունեցող ձևափոխություններում (վերաձևավորվող ձևափոխություններ),
- ինֆրակառուցվածքային ճյուղերի զարգացումը,
- մրցակցային միջավայրի ընդլայնումը և գործարարության խթանումը,
- էկոլոգիական յուրավիճակի բարելավումը,
- բնակչության ապահովումը սեփական արտադրության պարենամթերքով (ինարավորության սահմաններում):

Ընտրված առաջնությունների շրջանակներում կարելի է իրականացնել օբյեկտների ներդրումային ապահովում՝

- ներդրումային առավել պատրաստ ռեսուրսների արդյունավետ կուսակում և օգտագործում,
- արտադրանք կամ գործունեություն, որոնք ի վիճակի են խթանող ներգործություն ցույց տալ գույություն ունեցող արտադրություններում,
- տելեմիլիկա-տելեմոբիլիտիկական մակարդակի բարձրացման հնարավորությունների ստեղծում:

Հանրապետության գյուղատնտեսությունում ներդրումային գործունեության ակտիվացմանը խոչընդոտում է նաև սեփական ռեսուրսների անբավարկությունը: Առավել նպատակահարմար է ներդրումների ծանրաբեռնվածության հիմնական բեռը ուղղորդել դեպի՝ գյուղատնտեսական ձևափոխությունների սեփական միջոցները: Ներդրումային միջոցների մեծ մասը ներկա ձևավորված պայմաններում կարող է ստացվել ամորտիզացիոն հատկացումների ձևով:

Ներկայումս իրականացվող պետական միջոցառումները ամորտիզացիայի դերի վերականգնման ուղղությամբ, որպես հիմնական աղբյուր կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար, առայժմ հաջողության չեն հանգեցրել: Կոտակված ամորտիզացիոն ֆոնդը հարկադրված օգտագործվում է շրջանառու միջոցների համարման համար, ինչպես նաև ծածկելու արտադրության ծախսերը: Ֆինանսական համակարգի ճգնաժամը հնարավորություն չի տալիս ֆոնդերն օգտագործել լիստ նշանակության ընդլայնված վերարտադրության ապահովման համար:

Հատկացումների արդյունավետության բարձրացման և ամորտիզացիան՝ որպես հիմնական ֆոնդերի վերարտադրության ներդրումների՝ գլխավոր աղբյուր օգտագործելու համար անհրաժեշտ է ստեղծել ֆինանսական նախապայմաններ՝ ամորտիզացիոն ֆոնդերի ձևավորման համար, կատարելագործել ամորտիզացիոն հատկացումների նորմատիվները և հաշվարկման մեթոդները, այդ թվում՝ հիմնական ֆոնդերի գնահատումը, ապահովել ամորտիզացիոն հատկացումների նպատակային օգտագործումը:

Ներդրողների մոտ հետաքրքրություն առաջանալուց հետո կոնկրետ ծրագրի հետ կապված՝ սկսվում է նրա բիզնես-պլանի մշակումը, որտեղ շարադրվում է ծրագրի էությունը և նրա իրացման փուլերը, ներդրողների երաշխիքային ձևը և մակարդակը, ֆինանսավորման սխեման (միջազգային վարկեր, արտասահմանյան բանկերի վարկեր, հայկական կոմերցիոն բանկերի վարկեր, ներդրումային ֆոնդերի միջոցներ, փոխադարձ բարերային մատակարարումներ և այլն): Այստեղ սրվում են տելեմիլիտիկա և տելեմոբիլիտիկա, սարքավորումների մատակարարումների գրաֆիկը, տեսակը, ծավալները, ծրագրի տնտեսական արդյունավետության հաշվարկը:

Մեր կողմից առաջարկվող կազմակերպչական կառուցվածքը բնութվել է խոշոր միջազգային ներդրումային ծրագրերի իրացման և Ռուսաստանի Դաշնության ազդարային սեկտորի համանման ծրագրերի փորձի հիման վրա: Ծրագրի իրացման կառուցվածքային հիմքում ընկած են հետևյալ երկու կողմերի ղեկավարումները՝

- միացյալ ֆինանսա-ազդարային հոլդինգի ձևավորումը, որը հանդես է գալիս որպես իրավաբանական կազմակերպչական կառուցվածք բոլոր նրա մեջ մտնող ծրագրի կազմակերպություններին, ձևափոխություններին և ֆիրմաներին,
- իրացման արտադրանքի մշակումը և ծրագրի կառավարումը միացյալ կենտրոնից,
- միացյալ բոլորի համար ծրագրի ապահովումը, ռեսուրսային և ֆինանսական հոսքերի կազմակերպումը,
- սեփական ապահովման գյուղատնտեսական արտադրության վերակառուցումը:

Սակայն, շարադրված ներդրումային ծրագրերի կազմակերպչական կառուցվածքի իրացումը ոչ մի դեպքում չպետք է դիտարկել որպես միակ հնարավոր, բայց մեր կարծի-

քով այդ գաղափարները, ելակետային դիրքերը, սկզբունքները անկասկած օգտակար կարող են լինել:

Ներդրումային ռեսուրսների ղեֆինցիալի հարթահարումը հանրապետության գյուղատնտեսության զարգացման համար պահանջում է քոլոր հնարավոր աղբյուրների ծոբիլի-գացում ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին: Դրանց համադրումը ցույց է տալիս, որ ներքին աղբյուրների օգտագործման ակտիվացման համար պահանջվում է ժամանակ, որն անհրաժեշտ է՝ ֆինանսավարկային համակարգը և պետական բյուջեի հնարավորությունները վերականգնելու համար: Ուստի, մոտ հեռանկարում առանձնահատուկ դեր է ձեռք բերում արտասահմանյան վարկերի և ներդրումների ներգրավումը:

Ուղղակի արտասահմանյան ներդրումների ներգրավումը գյուղատնտեսության ոլորտ ոչ միայն անհրաժեշտ, այլ նաև շատ բարդ խնդիր է մեր պետության համար: Դրա լուծումը մոտակա հեռանկարում հնարավոր է, մեր կարծիքով, մի շարք պայմանների կատարման դեպքում, որոնցից հիմնականներն են՝

- ֆինանսական ինֆրակառուցվածքի բափանցելիությունը,
- ներդրումային ծրագրերի վարերի առկայությունը,
- հայկական և արտասահմանյան գործընկերների համաձայնությունը համատեղ ձեռնարկությունների ստեղծման գործում (կամ էլ, սակայն, ձեռնարկության՝ 100% արտասահմանյան կապիտալով),
- քայննպաստ ներդրումային կլիմայի ստեղծում, առաջին հերթին իրավական բազային համապատասխան՝ արտասահմանյան ներդրումները ներգրավելու և արդյունավետ օգտագործելու նպաստակով,
- պետական աջակցությունը,
- ոլիսկի աստիճանի հնարավոր իջեցումը:

Նման պայմանների ստեղծումը պահանջում է աշխատանքների կազմակերպման ծրագրային մեթոդներ պետական և ռեգիոնալ մակարդակներում: Դա հնարավորություն կտա ապահովել կազմակերպչական և մեթոդական մուսեցումների միասնությունը ինչպես ծրագրի պատրաստման պրոցեսում, այնպես էլ նրանց իրացման փուլում:

Ազրարային ոլորտում մեր կարծիքով ներդրումների ֆինանսավորման հեռանկարային ձեռքից կարող է դառնալ մեքենաների և սարքավորումների լիզինգը:

Լիզինգային հարաբերությունները օգնում են դուրս գալ փակուղուց այն դեպքում, երբ արդյունաբերությունը պատրաստ չէ գյուղատնտեսությանը հատկացնել տեխնիկա մատչելի, բնորոնկի գներով (ոլորնք այժմ մի քանի տասնյակ անգամ բանկացել են), իսկ առանց տեխնիկայի անհնար է արտադրել է.ժան, մրցունակ արտադրանք: Լիզինգի գաղափարը հնարավորություն է տալիս՝ արդյունավետ վերաբաշխել բյուջետային հատկացումները, դրանք հասցնել նրանց, ովքեր աշխատում են շահուրաբեր և ի վիճակի են վերադարձնել գումարները լիզինգային հաշիվներով, ինչպես նաև օգնել ներդրելու գյուղատնտեսական նոր տեխնոլոգիաներ:

Այսօր մեծ ուշադրություն պետք է դարձվեն գյուղում հիպոտեկ վարկերի խնդիրն: Խոսքը գնում է հողի շուկայի մասին, որը, սակայն, մեր հանրապետությունում դեռևս ձևավորված չէ, որի կալցացման համար առայժմ չկան բավականաչափ սոցիալ-տնտեսական հիմքեր: Սակայն այդ ուղղությամբ մեր կարծիքով անհրաժեշտ է ակտիվ աշխատանքներ տանել՝ մոտ հեռանկարում այն ձևավորելու համար:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է «Հիմնական ֆունդերի վերաբաշխության ռազմավարությունը և ներդրումների հիմնական ուղղություններն ու հեռանկարները Շիրակի մարզի ԱԱՀ-ում» խնդրի վերլուծությանը, ուր դիտարկված են Շիրակի մարզի գյուղատնտեսության հիմնական ֆունդերի վերարտադրության ռազմավարության, Շիրակի մարզի ագրոպարենային համալիրում ներդրումների իրականացման, Շիրակի մարզի ագրոպարենային համալիրի մուլերնացման գործում արտասահմանյան ներդրումների դերի, մարզի ներդրումային կլիմայի ստեղծման իրավա-օրենսդրական նախապայմանների և մարզի սննդի ու վերաշակվող արդյունաբերությունում համատեղ ձեռնարկությունների կազմակերպման անհրաժեշտության խնդիրները:

Այժմ հիմնական ֆունդերի վերարտադրությունը տեղի է ունենում ճյուղի արտադրական ներուժի կրճատման պայմաններում: Ըստ առկա տվյալների, Շիրակի մարզում գյուղատնտեսության ֆունդերի միջին մաշվածքը 1999-ին հասել է 62%-ի:

Ազրոհամալիրի Լեյոնոմիկայի կայունացման, այնուհետև և վերելքի իրականացման նպատակով աշխատանքում դիտարկվել է երկու սարատեղիական ուղղություն՝ կազմակերպա-տնտեսական և նյութատեխնիկական:

Առաջին Շիրակի մարզի ազրոպարենային համալիրի կազմակերպա-կառավարման և տնտեսական ամբողջականության վերականգնումն է՝ որպես արտադրատնտեսական համակարգ: Անհրաժեշտ է վերականգնել, ամրապնդել այն՝ հարմարեցնելով շուկայական տնտեսության պայմաններին՝ միաժամանակ ապահովելով տնտեսավարման նոր հարաբերությունների բնականոն շարժը:

Երկրորդ ուղղությունը նշված ձեռնարկությունների տեխնիկական վերազինումն է, արտադրության անխնայության և կազմակերպման համապատասխանեցումը համաշխարհային ստանդարտներին:

Ճյուղերի տեխնիկական վերազինումը և ԱԱՀ-ի արտադրությունը պահանջում է մասշտաբային կապիտալ ներդրումներ՝ ի հաշիվ ձեռնարկությունների սեփական միջոցների, պետության ֆինանսական աջակցության, քանկերի երկարաժամկետ վարկերի, արտասահմանյան ֆինանսական և նյութական ռեսուրսների ներդրման և այլ աղբյուրների:

Ըստ մեր հաշվարկների, մինչև 2005թ-ը Շիրակի մարզի ազրոպարենային համալիրում անհրաժեշտ է ընդգրկել ոչ պակաս, քան 40 մլն.ամերիկյան դոլլարին համարժեք ներդրում, որից 32 մլն-ը՝ ի հաշիվ ներդրողների, ներառյալ ձեռնարկությունների սեփական միջոցները: Դրա հետ կապված չտվագանց արդիական է դառնում ներդրումների հեռանկարային ուղղությունների որոշումը: Հիմնական պահանջը ներդրված միջոցների արագ փոխհատուցումն է և շահույթի ստացումը, որը և հնարավորություն կտա վերջինիս օգտին վերարաշխման միջոցով կարճ ժամանակահատվածում հավասարակշռել ազրոպարենային համալիրի բոլոր ճյուղերի զարգացումը:

Շատերը ենթադրում են, որ առաջին հերթին ինովացիոն տեխնիկա-տեխնոլոգիական միջոցները անհրաժեշտ է ներդնել անմիջականորեն գյուղատնտեսության մեջ, ազրոպարենային համալիրի քաղաքային ճյուղում: Իրականում նման քաղաքականությունը դժվար բն ամենաարդյունավետն է, քանի որ անհնար է ապահովել կարճ ժամանակահատվածում ծախսված ֆինանսական միջոցների ևս բերումը՝ շխտելով արդեն նրանց Լուկան

ամի մասին: Գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունը և մեծ ինքն-ցիան կանխորոշում է նրա զանդալ և ոչ համարժեք ռեսուրսների ներդրումների նկատմամբ:

Գրանով էլ հենց բացատրվում է տարբեր մասնավոր ձեռնարկների (կոմերցիոն, քանկային, ապահովագրական) անհետաքրքրությունը ազրոպարենային համալիրում ներդրումներ կատարելու գործում:

Սեր կողմից կատարված վերլուծությունը հիմք է սալիս ենթադրել, որ ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ գույուղվույ ճյուղերի տեխնիկական վերազինման խնդիրը առավել նպատակահարմար է լուծել, ի հաշիվ վերածախույ արդյունաբերությանը գերակայություն տալու, ներդրումներ հատկացնելու տեսանկյունից: Դա հնարավորություն կտա առաջին հերթին ավելացնել վերածախվույ գյուղամրկըների բաժինը նրա ընդհանուր իրացվույ ծավալում, հետևաբար և արմատապես կրճատել տրանսպորտով տեղափոխման ծախսերը, երկրորդ հերթին՝ տեղափոխման ժամանակ կրճատել արտադրանքի քանակական և որակական կորուստները, կորույժ՝ մի քանի՝ անգամ ընդլայնել տեսականին, բարելավել ապրանքային տեսքը և արտադրանքի սպառողական հատկանիշները: Վերածախման ոլորտը նման պայմաններում դառնում է բավականին գրավիչ մասնավոր ներդրողների, այդ թվում՝ արտասահմանյան ներդրողների համար նույնպես:

Հաշվի առնելով, որ վերածախույ ձեռնարկությունների շինարարության, վերականգնման, մոդերնացման ծրագրերի արդյունավետությունը տարբեր է, իսկ ֆինանսական ռեսուրսները՝ սահմանափակ, անհրաժեշտ է ներդրումների օբյեկտների մանրակրկիտ բնտրություն կատարել (ծրագրերում), սահմանել ներդրումային ռեյտինգը: Հետևաբար ազրոպարենային համակարգում ներդրումային քաղաքականությունը պետք է նպատակամղվի արդեն իսկ ստեղծված պոտենցիալի պահպանմանը և զարգացմանը, նպատակային ծրագրերի մշակման համար միջոցների հատկացմանը, մրցույթային կարգով ներդրումային ռեսուրսների ընդգրկմանը:

Հիմնական ներդրումները անհրաժեշտ է ուղղել մարգում գործող պետական նպատակային և մարգային ծրագրերի ֆինանսավորմանը՝ ի հաշիվ կենտրոնացված աղբյուրների: Մարզի մակարնային արդյունաբերության ներդրումների իրականացման հեռա-

նկարային ուղղությունը ներկա ժամանակահատվածում կարելի է համարել առաջընթացային տեխնոլոգիայի և նոր տեխնիկայի ներդրումը՝ կարնեղեն-մսեղենի արտադրատեսակների որակի բարելավման, երկար ժամանակահատվածում դրանց պահպանման, փաթեթավորման որակի բարձրացման նպատակով: Մրանք գործոններ են, որոնք Լապես կարող են բարձրացնել մսեղեն-կարնեղենի արտադրանքի պահանջարկը: Մնային ճյուղում գերակայող պետք է լինի հումքի խոր վերամշակմամբ, տարբեր տեսակի արտադրանքների արտադրությունը՝ նորագույն տեխնոլոգիաների օգնությամբ:

Ի հաշիվ կոնցենտրացման և արտադրույետային աղյուրների օգտագործման, սպառողական կոուկերացիայի ձևավորման՝ փոքր թիվների աչակցման ֆոնդերի և այլնի միջոցով հնարավոր է մինչև 2005թ-ը մարզում հասնել որոշակի ներդրումային հաջողության: Եվ որ կարևոր է, ներկա ծանր պայմաններում անհրաժեշտ է վերացնել այն անտեսական և վարչական արգելքները, որոնք խոչընդոտում են ներդրումային քաղաքականության իրականացմանը:

Մարզի սննդային ենթահամայնքում ձևավորված վիճակը բնութագրվում է արտադրանքի արտադրության կարող անկումներով, շատ ու շատ ձեռնարկություններում ճգնաժամային իրավիճակով, հիմնական արտադրական ֆոնդերի ձեռացմամբ, հատկապես դրանց ակտիվ մասի, որոնց միջին օգտագործման, ծառայության ժամկետը կազմում է 25 տարի: Ծարքից դուրս գալու գործակիցը մարզում վերջին տարիներին չի գերազանցել 5-6%, ինչ շահագործման գործակիցը՝ 6-7%-ի: Այսպիսով, մաշվածքի վերարտադրական պրոցեսների համամասնության խախտումը չի գերազանցել 40%, իսկ սարքավորումների մաշվածքը կազմել է ավելի, քան 60%: Հնացած տեխնիկայի բաժինը, որը պահանջում է անհատալի փոխարինում, գերազանցում է 30%-ը: Բավականին ետ է մնում նյութա-տեխնիկական բազայի պահանջներից արտադրական ենթակառուցվածքը՝ գյուղատնտեսական հումքի պահպանման տեսանկյունից: Կարևորագույն տեսակի սարքավորումների պահանջարկը բավարարվում է ընդամենը 40-50%-ով: Առաջավոր տեխնիկայի պահանջարկը (միջազգային ստանդարտ) կազմում է ընդամենը՝ 5-6%: Իսկ ներկայումս մարզում ապրուպարենային համայնքի ուղղվող ընդհանուր միջոցներից սննդային ենթահամայնք է ուղղվում ընդամենը 2,5%-ը:

Արդյունքում իջել է վերամշակվող ձեռնարկությունների շահութաբերությունը, որի հիմնական պատճառներից է մրցակցության ուժեղացումը արտասահմանյան ապրանքների կողմից, իսկ տեղական պարենային ապրանքների թույլ մրցակցությունը պայմանավորված է վերևում նշված գործոններով: Հետաքրքիր է նշել, որ ներմուծվող սննդամթերքի գրեթե կեսը հանրապետությունում չի արտադրվում, որը պայմանավորված է համապատասխան սարքավորումների բացակայությամբ:

Բոլոր տնտեսական ծրագրերում առանձնահատուկ հույսեր է կապվում արտասահմանյան ներդրումների հետ, որոնք հնարավորություն կտան զգալիորեն ապահովել ագրարային Լկոնոմիկայի կառուցվածքային վերակառուցումը, բարձրացնել նրա արտահանման պոտենցիալը, կայունացնել սոցիալական իրավիճակը:

1999թ. տվյալներով Հայաստանում արդեն կային արտասահմանյան մասնակցությամբ 1663 իրավաբանական անձ և առանձնացված ստորաբաժանումներ, որոնցից 61-ը (3,67%-ը) գտնվում է Շիրակի մարզում: Միայն արտասահմանյան ներդրումների քանակը 1967-ն է, որից Շիրակի մարզում 49 (2,49%), ընդ որում՝ դրանց ներդրումների ընդհանուր գումարը հանրապետությունում կազմել է 123672,8 մլն.դրամ, այդ թվում Շիրակի մարզում ընդամենը՝ 75,8 մլն.դրամ:

Իհարկե, նման ցածր ներդրումային ակտիվության պայմաններում (արտասահմանյան ներդրումների կողմից) չի կարելի սկսելակել մարզի ազրուպարենային համայնքի դրական տեղաշարժեր:

Հայրական շուկայի տեսական գրավչությունը այսօր ցավոք իր տեղը գիջել է մի շարք բացասական գործոնների, որի հետևանքով ինչպես արդեն նշել ենք՝ ներդրումներ շատ քիչ են արվում: Եվ դրա արդյունքում կապիտալը Հայաստանից դուրս է հոսում:

Լրացուցիչ վերամշակման կարիք ունի հետևյալ հարցը, րև ինչպե՞ս անցում կատարել արտասահմանյան ներդրողի սպասման ռեժիմից նրա ակտիվ փնտրման ռեժիմին:

Շատ կարևոր է, որ սկսվեն լուրջ աշխատանքներ մեր երկրի ներդրումային իմիջի ստեղծման ուղղությամբ, որպեսզի Հայաստանը ներկայացվի արտասահմանյան ներդրողներին: Վերջապես եկել է ժամանակը, որպեսզի աշխատանք կատարվի Հայաստանի միջազգային ներդրումային ռեյտինգ (դասակարգում) ստանալու համար, առանց որի շատ

ղծվար Լ. համոզել արտասահմանյան ներդրողներին՝ միացնել ներդրելու երկրի Էկոնոմիկայում և, մասնավորապես, այնպիսի ծանր շրջանում, ինչպիսին Լ. Շիրակի մարզը:

Մոնետար կայունացման ժամանակին չկարգավորված, չճշգրտված քաղաքականությունը հանգեցրել է նրան, որ ընկել է լսնայությունների նորման, չիմնավորված քանկացել են վարկային ռեսուրսները, որոնց գերակշիռ մասը օգտագործվում է չրավարարող շրջանառու միջոցների լրացման և ձևնարկությունների վճարային խնդիրները լուծելու նպատակով: Հայաստանի Էկոնոմիկայում որոշակի չափով տեղի է ունեցել շրջանառության ոլորտի բաժանումը իրական սեկտորից: Մակրոտնտեսական միջոցառումներով կառավարությունը արձագանքում է հիմնականում շրջանառության ոլորտում, իսկ Էկոնոմիկայի իրական ոլորտում համարվել փոփոխություններ գրեթե տեղի չեն ունեցել: Արդյունքում բանկերը և այլ ներդրումային ինստիտուտներ գերադասում են գերծ մնալ ԱԱՀ-ի երկարաժամկետ վարկավորման օպերացիաներից: Ներդրումների աճի հնարավորությունը, ի հաշիվ մասնավոր լսնայությունների, սահմանափակում է հանրապետության բնակչության կենսամակարդակի ցածր աստիճանը:

Ներդրումային պրոցեսի ձևավորման համաշխարհային փորձը և նրա զարգացման նախադրյալների ստեղծումը Հայաստանում և Շիրակի մարզում մասնավորապես հնարավորություն է տալիս մեզ՝ աուսչարկելու ներդրումների խառը ոլորտների հիմնադրույթային մոդել, որը պատկերված է N 1 սղյուսակում: Հիմնավորելով ներդրումների տարբեր աղբյուրների տնտեսա-իրավական մեխանիզմը՝ մենք դեկավարվել ենք նախապայմանով, որ Շիրակի մարզի ազրուպարենային համալիրը ճգնաժամից դուրս հանելու ելք կա, և այն առաջին հերթին հնարավոր է՝ ի հաշիվ սեփական միջոցների և ուժերի: Ընաց արտահանման ուղղվածության մոդելի ստեղծումը ներկա փուլում զգալիորեն կախված է արտասահմանյան ներդրողների ակտիվության մակարդակից: Նրանց օգնությամբ հնարավոր է տարածել նորագույն տեխնիկա և տեխնոլոգիա, ստեղծել լրացուցիչ աշխատատեղեր, ապահովել մրցունակ սշրտաղրություն: Պետությունը, ներգրավելով կապիտալ ներդրումներ, միաժամանակ որոշակի չափով ապահովում է շահույթի տեղավոխումը արտասահման:

Աղյուսակ N 1

Ազրուպարենային համալիրի ներդրումների իրավաճանցան խառը ոլորտների հիմնադրույթային մոդել

Ազրուպարենային համալիրի ոլորտներ	Ներդրումների աղբյուրները		Սպաճող մոդերնիզացման էջերը
	Սեփական արտադրություն	Ցիմնադրություն (արտադրված)	
1. Աղյուսակային գյուղ, որոնք մասնավորապես են գյուղատնտեսության արտադրության միջոցներ, գրաված են գյուղատնտեսության արտադրանքի վրայից ստացվող շահույթի մասնավորումը:	Ցիմնադրությունների սեփական միջոցներ: Ծրույթային նպատակային միջոցներ: Ծաղրակող դեպրիտում պետական միջոցներ	Ցիմնադրություն (արտադրված) խմբի միջոցներ: Ռեդրակի արտասահմանյան միջոցներ: Չանարկությունների սեփական միջոցներ: Ներդրումային բանկի միջոցներ: Միջոցներ: Ռեդրակի արտասահմանյան միջոցներ: Չանարկությունների սեփական միջոցներ: Ընախարարական միջոցներ:	Նոր սերնդի մերձաների յուրացում: Ընկերություններում և կրթության մեջ ներդրությունը շրջակա միջավայրի վրա:
2. Սեփականության բոլոր տեսակի գյուղատնտեսական արտադրանք արտադրողներ	Ցիմնադրությունների սեփական միջոցներ: Ծրույթային նպատակային միջոցներ:	Ցիմնադրություն (արտադրված) խմբի միջոցներ: Չանարկությունների սեփական միջոցներ: Ընախարարական միջոցներ:	Արտադրության ծավալների կայունացում և սովորացում:
3. Ծրույթ, որոնք ապահովում են գյուղատնտեսական արտադրանքի տեղավորումը միջև տպառոլին (մրկություն), վերահսկում, պետական կայուն:	Ցիմնադրությունների սեփական միջոցներ: Ծրույթային նպատակային միջոցներ:	Ցիմնադրություն (արտադրված) խմբի միջոցներ: Չանարկությունների սեփական միջոցներ: Ընախարարական միջոցներ:	Բարձրորակ, մրցունակ արտադրանքի կրթությունների նվազագույնի հասնելը
4. Արտադրության և սոցիալական ինֆրաստրուկտուր (համապարփաարժեքային ծախսերի և արժեքային ծախսերի) կազմ, ինֆրաստրուկտուրային ընդարձակում և կոլտար-կնցարդային սովորումներ)	Ցիմնադրությունների սեփական միջոցներ: Ծրույթային նպատակային միջոցներ: Ծրույթային նպատակային միջոցներ:	Ցիմնադրություն (արտադրված) խմբի միջոցներ: Չանարկությունների սեփական միջոցներ: Ընախարարական միջոցներ:	Արտադրական և սոցիալական ինֆրաստրուկտուրային զարգացումը, որն ապահովում է աշխատանքի և վնցուղի նորմալ կայունումը

Առաջարկվող մոդելի հիմքում ընկած է ԱԱՀ-ի տարբեր ոլորտների ներդրումների միևնույն աղբյուրների ոչ միատեսակ պիտանիության (արդյունավետության) տեսությունը: Դա առաջին հերթին բացատրվում է նրանով, որ ֆունդատարությունը, շրջապատյալի աստիճանը և ռիսկը, ԱԱՀ-ի տարբեր ոլորտներում մրցակցային միջավայրի մակարդակը, երկրորդ՝ մի որևէ ոլորտի վերարտադրության, կամ վերակառուցման համար. (և չենք ասում արդեն տարբեր ոլորտների մասին), անհրաժեշտ են իրենց ծավալներով տարբեր կապիտալներ: Երրորդ՝ ճգնաժամը տարբեր չափով ազդել է այս կամ այն ճյուղի վրա, օրինակ՝ ԱԱՀ-ի երրորդ ոլորտում կապիտալը արագ փոխհատուցվում է: Հետևաբար, ներդրումների աղբյուրների հիմնավորման ժամանակ ԱԱՀ-ի յուրաքանչյուր ոլորտ պետք է դիտարկել առանձին:

Շուկայական հարաբերությունների զարգացման ներկա փուլը պահանջում է տրադիցիոն ձևերի օգտագործման ետև միասին նոր աղբյուրների ձևավորում՝ հաշվի առնելով պետության տնտեսական և քաղաքական համակարգերի փոփոխությունները: Ներդրումների տարբեր մեխանիզմները պետք է որացնեն այն բացը, որն առաջացել է պետական ֆինանսավորման կրճատման հետևանքով:

Մեր կարծիքով տվյալ հարցը կարելի է լուծել ֆինանսավան և արդյունաբերական կապիտալների ձուլման միջոցով, ֆինանսարդյունաբերական խմբերի շրջանակներում: Դա է վկայում Ռուսաստանի Դաշնության օրինակը, որտեղ խոշոր կոմերցիոն բանկերը սկսել են արամաղլել ներդրումային վարկեր առաջին հերթին իրենց գործընկերներին ֆինանսա-արդյունաբերական խմբերում:

Ներդրումային ռեսուրսների համալրման կարևոր աղբյուր է սեփականաշնորհման երկրորդ փուլը, որը նպաստում է ֆինանսավան ռեսուրսների կուտակման փայտափրակային ընկերությունների ձևերում:

Այստեղ կան ռեզերվներ բնակչության մասնակցության տեսակետից նրանց միջոցները ներգրավելով բաժնետոմսերի վաճառքի միջոցով (մանր և միջին ձևերակոորյուններ):

Կապիտալի բավականաչափ արագ շրջանառությունը հրապուրիչ կլինի բնակչության համար, հատկապես ազրուպարենային համալիրի երրորդ ոլորտում

Դյուրային և ռեզիոնայ մակարդակներում նպատակահարմար է ստեղծել ինֆորմացիոն-վերլուծական կենտրոններ, որոնք ցույց կտան բնակչության իրական տնտեսական շահը՝ ներդրումային պրոցեսին մասնակցելիս:

Եզրակացություններում և ստացարկություններում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնց իրագործումը կարող է նպաստել ՀՀ և Շիրակի մարզի ազրուպարենային համալիրի ներդրումային քաղաքականության իրականացմանը:

Ատենալիտսության հիմնական դրույրները՝արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Գ.Գ. Հայրովյան, Հ.Պ. Սյւրարյան-Ջեռնարկատիրական կապիտալը Շիրակի մարզի սննդի և վերամշակող արդյունաբերությանն ուղղուղելու անհրաժեշտությունը և մասնակից տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների կարգավորման մեթոդական մոտեցումները: Նրևան: «Լաիան», 1999-63 էջ:
2. Հ.Պ. Սյւրարյան-Ազրուպարենային համակարգի ստանձին ճյուղերում, տարածաշրջանային ներակառուցվածքային ձևավորումներում ինվեստավորման անհրաժեշտությունը, նախապայմանները և արդյունավետությունը: Նրևան: «Լաիան», 1999-55 էջ:
3. Հ.Պ. Սյւրարյան-Ներդրումների ներգրավումը ազրուպարենային համակարգում: Նրևան: ԴՆպատիպ «Ազրուպրես» խմբ. կենտրոնի, 2000թ.-6 էջ:
4. Հ.Պ. Սյւրարյան Ներդրումները ազրուպարենային համալիրում՝ որպես երկարամասկետ ֆինանսավորման հիմնական գործոն: Նրևան: ԴՆպատիպ «Ազրուպրես» խմբ. կենտրոնի, 2000թ.-4 էջ:
5. Հ.Պ. Սյւրարյան Արատահամայն ներդրումների դերը Շիրակի մարզի ազրուպարենային համալիրի մոդերնացման և տնտեսական պատասխանատվության մեխանիզմի կատարելագործման մեջ: «Ազրուպրես» ամսագիր, րիվ 11, Նրևան, 2000թ, էջ՝ 543-548:

Мхитарян Айкарам Погосович

фамилия, имя, отчество

"Стратегические проблемы инвестиционной политики агропродовольственного комплекса (по примеру Ширакской области РА)"

название диссертации

диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности "Экономика и управление хозяйством, его отраслей"

защита состоится 19 апреля 2001г. по адресу 375025, г.Ереван, ул. Налбандяна 128

в ЕРГИЭ

РЕЗЮМЕ

В АПК Ширакской области произошла деиндустриализация деревни, сельское хозяйство по обеспечению техникой опустело до уровня 60-х годов. Сложившаяся в пищевом подкомплексе ситуация характеризуется кризисным состоянием большинства предприятий, старением основных производственных фондов. Исходя из вышесказанного, крайне актуальны проблемы инвестирования в ОПФ АПК Ширакской области.

Преодоление дефицита инвестиционных ресурсов для развития АПК требует мобилизации всех возможных источников как внутренних, так и внешних. Их соотношение показывает, что для активного использования внутренних источников потребуется время, необходимое для восстановления финансово-кредитной системы и возможностей государственного бюджета. Поэтому, в ближайшей перспективе, особую актуальность приобретает привлечение иностранных кредитов и инвестиций.

Проблему технического перевооружения как сельского хозяйства, так и смежных отраслей, наиболее целесообразно решать за счет опережающих инвестиций в перерабатывающую промышленность. Для активизации инвесторов необходимо предоставлять им различные налоговые льготы по инвестированию. Для достижения системности в работе и конечной эффективности управленческих решений в процессе реализации инвестиционного проекта, важно создать адаптированную к законодательной базе и местным региональным условиям организованную структуру.

Интеграция инновационной, инвестиционной структурной политики в АПК Ширакской области позволит провести технико-технологическую реконструкцию производства на основе новейших достижений науки и техники, повысить конкурентоспособность продукции, снизить издержки производства, обновить ОПФ и т.д.

Анализ мирового опыта формирования инвестиционного процесса и экономические предпосылки его развития в Армении вообще, и в Ширакской области в частности, позволяют предложить концептуальную модель смешанных каналов инвестирования.

05.02.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆՏԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԳՐԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆՏԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԳՐԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL1780159

